«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 25-ի N 1051-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ. _____ ____-ի N_____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի N 1051-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 25-ի «**Կենսաբանական ծագման նմուշներում հայտնաբերված և նույնականացված ԴՆԹ (դեզօքսիռիբոնուկլեինաթթու) բնութագրերի հաշվառում իրականացնելու, ինչպես նաև դատագենետիկական փորձաքննությունների արդյունքում հայտնաբերված ԴՆԹ բնութագրերը փորձագիտական հիմնարկների կողմից Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը տրամադրվելու կարգը սահմանելու մասին**» N 1051-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 5-րդ կետում, 9-րդ կետի 1-ին ենթակետում, 20-րդ կետում «գործով» բառը փոխարինել «վարույթով» բառով,

2) 18-րդ և 19-րդ կետերից հանել «գործի» բառը,

3) 19-րդ կետից հանել «քրեական գործերով» բառերը,

4) 20-րդ կետում «գործի քննությամբ» բառերը փոխարինել «վարույթի ընթացքում» բառերով,

5) ՁԵ N 1-ում և ՁԵ N 2-ում «գործի (նյութերի)» բառերը փոխարինել «վարույթի» բառով,

6) ՁԵ N 2-ից հանել «կասկածյալ,» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան

ք. Երևան «

»____2022թ.